ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

21 մայիսի 2026 թվականի N 715 - Ն

ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԵՐ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ԿՈՂՄԻՑ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՉՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔ ՆԵՐՄՈՒԾՎՈՂ ԱՆՁՆԱԿԱՆ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԱՊՐԱՆՔՆԵՐԻ՝ ԱՌԱՆՑ ՄԱՔՍԱՏՈՒՐՔԵՐԻ ԵՎ ՀԱՐԿԵՐԻ ՎՃԱՐՄԱՆ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԲՆԱՀԻՐԱՅԻՆ ՉԱՓԱՔԱՆԱԿՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

«Մաքսային կարգավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 338-րդ հոդվածի 6-րդ մասին և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 107 որոշման 1-ին կետի «է» ենթակետին համապատասխան՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը

ո ր ո շ ու մ է.

1. Սահմանել անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձանց կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների՝ առանց մաքսատուրքերի և հարկերի վճարման ներմուծման բնաիրային չափաքանակները՝ համաձայն հավելվածի:

2. Սահմանել, որ՝

1) անկախ սույն որոշման 1-ին կետով սահմանված չափաքանակներից մաքսատուրքերի և հարկերի վճարման պարտավորություն առաջանում է, եթե

ներմուծված ապրանքների արժեքը և (կամ) քանակը, քաշը գերազանցում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 107 որոշման N 1 հավելվածով սահմանված արժեքային և (կամ) քաշային և (կամ) քանակական նորմերը.

2) սույն որոշման 1-ին կետով սահմանված չափաքանակը գերազանցելու, սակայն Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 107 որոշման N 1 հավելվածով սահմանված արժեքային և (կամ) քաշային և (կամ) քանակական նորմերը չգերազանցելու դեպքում՝ սույն որոշման 1-ին կետով սահմանված չափաքանակը գերազանցող մասի արժեքի նկատմամբ կիրառվում են Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 107 որոշման N 2 հավելվածի 1-ին աղյուսակով սահմանված՝ մաքսատուրքերի, հարկերի միասնական դրույքաչափերը՝ կախված ապրանքների տեղափոխման եղանակից.

3) սույն որոշմամբ սահմանված չափաքանակները չեն տարածվում Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2017 թվականի դեկտեմբերի 20-ի N 107 որոշման N 6 հավելվածով սահմանված՝ անձնական օգտագործման ապրանքներին չդասվող ապրանքների կատեգորիաների վրա, ինչպես նաև ֆիզիկական անձինք չեն ազատվում՝ Եվրասիական տնտեսական միության մաքսային օրենսդրությամբ նախատեսված դեպքերում արգելքները և սահմանափակումները պահպանելու պարտավորությունից:

3. Անկախ սույն որոշման 1-ին կետով սահմանված չափաքանակներից՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի (այսուհետ՝ ԱՏԳ ԱԱ) համաձայն՝ ըստ հետևյալ ծածկագրերի՝ 1211, 151530 9000, 152 00 000 0, 2501, 2712 10, 2804 40 000 0, 281000, 2817 00 000 0, 2827 20 000 0, 2827 51 000 0, 2827 600000, 2833 21 000 0, 2833 27 000 0, 2847 00 000 0, 2904-2909, 2912-2942000000, 3001-3004, 3006 30 0000, 3006 60 000, 3006 930000, 3913 դեղագործական արտադրանքը (դեղերը) և (կամ) հետևյալ դիրքերում ընդգրկված դեղերը (դեղագործական արտադրանքը)՝ 2106909300, 2106909803, 2106909808՝ ֆիզիկական անձանց կողմից Հայաստանի Հանրապետություն են

ներմուծվում Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում, կարգով և չափաքանակներով:

4. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի օգոստոսի 8-ի «Ֆիզիկական անձանց կողմից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող անձնական օգտագործման ապրանքների՝ առանց մաքսատուրքի և հարկերի վճարման ներմուծման բնաիրային և արժեքային չափաքանակներ սահմանելու մասին» N 1206-Ն որոշումը:

5. Սույն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի «8471» տողի կիրառման նպատակով 2026 թվականի համար հարկային տարի է դիտվում սույն որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածը:

6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2026 թվականի սեպտեմբերի 1-ից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Մ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

Երևան

21.05.2026
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ